2. «Միություն և Առաջադիմություն» կոմիտե.- Այլ կերպ՝ երիտթուրքական կուսակցություն, որ կազմակերպվեց 19-րդ դարի

վերջերին, այն ժամանակ Օսմանյան կայսրության կազմի մեջ մտնող Զունաստանի Սալոնիկ քաղաքում, գաղտնի հրեաներից (կրիպտոհրեա), Բեռլինի սիոնիստական կոնգրեսի որոշմամբ:

Պաշտոնական նպատակը.- Թուրքիայում սուլթանի հետադիմական կառավարության տապալումն էր և կայսրության բոլոր ժողովուրդներին հավասարություն, առաջադիմություն և դեմոկրատական իրավունքներ ապահովելը, այդ հիմունքների վրա՝ կայսրության բոլոր ժողովուրդներին (հույներ, բուլղարներ, ալբաններ, հայեր, արաբներ և, իհարկե՝ թուրքեր) միավորելով ամրապնդել կայսրությունը:

Իրական նպատակը.- Կայսրությունը քայքայելով («ներսից պայթեցնելով») այլոց թվում, նրա կազմից դուրս բերել Պաղեստինը, հետագայում հրեական պետություն հիմնելու նպատակով: Այդ ընթացքում իրենց ձեռքը վերցնել Թուրքիայի բոլոր քաղաքական ու սոցիալական լծակները ինչպես՝ նախ վերը նշված նպատակի հաջող իրագործման, այնպես էլ՝ հետագայում երկիրը շահագործելու համար: Ինչպես ցույց տվեց հետագայի պատմությունն այդ ճանապարհին նրանք զոհեցին հայերին ու մասամբ հույներին՝ խաղաղով թուրքերի կենդանական բնագոյների վրա, նրան տրամադրելով դահճի դեր:

3. Կրիպտոհրեա.- Բարդ բառ՝ կազմված հունարեն «կրիպտո» և հրեա բառերից: Կրիպտո - գաղտնի, ծածուկ, թաքնված: Այսպես են կոչվում այն հրեաները, որոնք այլևայլ նպատակներով ներկայանում են որպես տվյալ միջավայրի հարազատ ներկայացուցիչ, ըստ որում, դա արվում է ամենախիճնավոր ձևով՝ հավատի, փաստաթղթերի, անուն, ազգանունների, խոսակցական լեզվի, բարքերի և այլն, փոխման միջոցով: Երիտթուրքական կուսակցության կազմակերպման ժամանակ, նրա ղեկավար կորիզը կազմող սալոնիկցի 200 հրեա ընտանիքներ գրանցվեցին որպես ի սկզբանե թուրք և մահմեդական, այլ՝ ոչ թե որպես հավատափոխ եղած հրեաներ:

4. Թուրքիայի նոր զարգացումները.- Նրատի ունի երիտթուրքական կուսակցության հրահրած «հեղափոխական» շարժումներն ու նույն նախածնունդային հսկայական կայսրության ամբողջ տարածքի վրա սուկների պես ծլող մասոնական «ժողովարանները» կամ օթյակները:

5. Յըլդըզ պալատ.- Թուրքերեն «Յըլդըզ» - աստղ-թուրքական սուլթանների պալատը Ստամբուլում:

6. «Եղբայրություն».- նկատի ունի մասոնական օթյակը կամ ժողովարանը: Պաշտոնապես մասոններն իրար անվանում են եղբայր, իսկ կազմակերպությունը՝ եղբայրություն:

7. Ֆրիմասոն.- Բարդ բառ, կազմված անգլերեն «ֆրի» (ազատ) և մասոն բառերից:

Մասոնական համաշխարհային կազմակերպության ենթակայական բարդ համակարգում ինքնուրույնության որոշ աստիճան ունեցող մասոն:

8. «Գրանտ Օտոման».- Թուրքիայում կազմակերպված մասոնական գլխավոր օթյակը, որ նպատակ ուներ միավորելու բազմաթիվ մանր օթյակները:

9. Պանիսլամիզմ.- Հետադիմական կրոնաքաղաքական գաղափարախոսություն, որի հիմքում ընկած են խալիֆայի գլխավորությամբ իսլամ դավանող բոլոր ժողովուրդների քաղաքական միավորման, նրանց վերազգային մի ընդհանրություն լինելու գաղափարները:

Ձևավորվել է 19-րդ դարի 2-րդ կեսին:

**«ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՀՄԱԾԱՌԸ» ԿՆԵՐԿԱՅԱՅՎԻ ՀԱՅՈՒԹՅԱՆԸ**

Հեռավոր Ալմերիայի ծովափնյա իր առանձնատանը գեղանկարիչ կնոջ ու տաղանդաշատ զավակների հետ ապրում և ստեղծագործում է իսպանացի ազնվական Գոնգալո Գուարչը: Մասնագիտությամբ ճարտարապետ, մեծահարուստ այս անձնավորությունը բազմաթիվ գրքեր է հեղինակել՝ նվիրված անարդարությունների, առաքանքների, հավածանքների, պատերազմների ու հարավերական խաղաղության մասին: Նրա «Հայկական տոհմածառը» վեպը ներկայացնում է Հայոց ցեղասպանությունը, ուր

հաճախ մարդասպաններն ու զոհերն ազականներ են դարձել...

Գուարչը անցյալ տարի եղավ Հայաստանում՝ շնորհիվ Իսպանիայում և Պորտուգալիայում ՀՀ դեսպան Էդուարդ Խոջոյանի: Հայաստանում նրան ընդունեցին և պատվեցին հանրապետության նախագահ Ռոբերտ Քոչարյանը, գրողների միության նախագահ Լևոն Անանյանը, իսկ ՀՀ մշակույթի նախարար Ռուանդ Շառոյանը պարգևատրեց գրողին: Գուարչի «Հայկական տոհմածառը» հանձնվեց տպագրության, որը պատվով կատարեց արգենտին-

նահայ նվիրյալ Ռոզետա Յուսուֆյանը:


Գրքի հայերեն տպագրության ծախսերն ստանձնել են Հայաստանի գրողների միությունը և ՀՀԴաշնակցությունը: «Հայկական տոհմածառն» ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 90-ամյակի ոգեկոչման օրերին, ներկայացվելու է հայ ընթերցողին՝ ձեռամբ Գոնգալո Գուարչի: Նա խոստացել է մի գիրք նվիրել հայությանը՝ որպես գլխավոր հերոս ընտրելով ցեղասպանության վրիժառու Սողոմոն Թեհլերյանին:

7. ՄՈՍԿՈՅՅԱՆ, Ալմիրիա-Երևան

Եթե ես հայ լինեի, ինձ երջանիկ չէի համարի մինչև այն պահը, քանի դեռ ազգիս քափառական քարավանները չեն հավաքվել իրենց պապենական հողի վրա:

*Ջ.ՕԼԴԲԻՋ  
(անգլիացի գրող)*

Ո՛վ մարդկային արդարություն, թող որ թքնեմ քո ճակտին:  
*(Սիամանթո)*



Ինձ դժվար է հավատալ, որ որևէ մեկը կարող է ծանոթանալ հայ ժողովրդի պատմությանը՝ առանց խորապես ցնցվելու նրա մեծ ողբերգությունից:

*(Ֆ.ՆԱՆՍԵՆ)*

Մեր բոլոր մագաղաթները մուրճի պես հարվածում են անարդար պատմության ճակատին:

*Լ. ԽԱՉԻԿՅԱՆ  
(պատմաբան, մատենագետ)*

Մեզ են գլխից են զարկել, բայց նորեն  
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:  
Հազար դարեր են զարկել, բայց նորեն  
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:  
Եղեռնազարկ էլ եղանք, բայց նորեն  
Հայերն ապրել են, ապրում են, կապրեն:  
**ՀՈՎՀ. ՇԻՐԱՋ**

Հայոց դեմ գործադրած ցեղասպանության ոճիրին իբրև արդյունք, Թուրքիա գրավեց ջարդված և տարագրված 3 միլիոն հայերու ահագին հարստությունը, շեն քաղաքներ ու գյուղեր, առավել՝ ստացվածք, ապրանք, առևտուր, որոնք միայն կանխիկ ոսկիի արժեքը քանի մը տասնյակ միլիարդի կհասներ: Եվ թուրքերը ունեցան շուրջ 300000 քառակուսի մղոն տարածությամբ հողամաս, 85 առ հարյուրը մշակելի, փարթամորեն արգավանդ հովիտներով ու դաշտերով:  
**Անդրանիկ Անդրեասյան**

Հայաստանը շատ փլուզումներ է ունեցել, բայց նա այսպես կամ այնպես կանգուն էր, սակայն այս վերջինը գլխեց ու անցավ: Անգամ Լենկ-Թեմուրի, Շահ-Աբասի և Համիդի ավերումները չնչին, աննշան համեմատություններ են ներկայացնում այս վերջին, բոլոր ազգերի, բոլոր դարերում եղած սարսափներից գերազանց աղետի հանդեպ...  
**ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆ**

«Քանի դեռ չի ճանաչվել Հայոց ցեղասպանությունը, ես մաս հայ եմ»  
Հայոց ցեղասպանության ճանաչման դեպքում կվերացվի թուրք և հայ ժողովուրդների միջև գոյություն ունեցող պատը, քանի որ 1915թ.-ից ի վեր հայ-թուրքական հարաբերություններ որպես այդպիսիք, գոյություն չունեն, և եթե այսպես շարունակվի, հարյուրամյակը կլրանա: Միայն ճանաչման դեպքում կսկսվեն անկեղծ հարաբերություններ:  
Ես Անատոլիայից եմ և արմատներով էլ թուրք եմ: Մայր լեզուս թուրքերենն է, և ծնողներս էլ թուրք են: Քանի դեռ չի ճանաչվել Հայոց ցեղասպանությունը, ես մաս հայ եմ:  
**Ռաքրի Չարաքոլու**  
(թուրքական «Օզգյուր Բաքըշ»  
(Ազատ հայացք) թերթի խմբագիր)

# ՔՈ ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՔԵՉ ՉԷ՛, ՈՐ ՊԻՏԻ ԱՊԱՅՈՒՅԵՄ



Լույս է տեսել մի գիրք, որի անհրաժեշտությունը հավանաբար վաղուց էր զգացվում: Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հայկ Ղազարյանի «Հայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» երկհատորյա աշխատության ռուսերեն տարբերակը (Երևան, «Տիգրան Մեծ»,

2004թ.) այն երկար սպասված գրքերից է, որը պատշաճ մակարդակով շարունակում է ցեղասպանության թեման: Եվ պատահական չէ, որ աշխատությունը ներկայացվել է նախագահի մրցանակի: Ըստ էության, այս գիրքը արժանի է համազգային ուշադրության: Նյութերի ծավալով, այդ թվում նաև առաջին անգամ գիտական շրջանառության մեջ մտցնելու առումով, գիրքը, թերևս, իր հավասարը չունի: Այն նաև մեծաթիվ քարտեզներ և հազվագյուտ լուսանկարներ է պարունակում: Ժամանակին մնան երևույթ էր Ջոն Կիրակոսյանի «Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ» գիրքը: (Ի դեպ, Ջոն Կիրակոսյանը Հայկ Ղազարյանի դոկտորական ատենախոսության պաշտպանության գիտական գրախոսն էր): Ո՞րն է այս երկու գրքերի տարբերությունը: Այս հարցին պրոֆեսոր Հայկ Ղազարյանն այսպես պատասխանեց. «Ջոն Կիրակոսյանի գիրքը գրվել է խորհրդային տարիներին և կրում է խորհրդային պատմագրության կնիքը, որոշակի գաղափարական չափորոշիչները: Դա անխուսափելի էր, այսպես գիրքը պարզապես լույս չէր տեսնի: Ջոնը ծայրաստիճանի ազնիվ ու հայրենասեր մարդ էր, սակայն որպես կուսակցական աշխատող, այնուհետև Հայաստանի արտաքին գործերի նախարար ոչ թե լռության էր մատնել, այլ ստիպված էր ուղղակի շրջանցել որոշ իրադարձություններ և փաստեր, մասնավորապես այն չարաբաստիկ դերը, որ խաղացել է Լենինը հայ ժողովրդի ճակատագրում... Ջոնը, ում հետ մենք շատ մտերիմ էինք, ինքն էր ցավով խոսում, թե ինչպիսի զոհողությունների է ստիպված եղել գնալ... Իմ գիրքը Ջոն Կիրակոսյանի գրքից տարբերվում է նրանով, որ ես գրել եմ ազատ, այն նյութերի հիման վրա, որոնք ժամանակին նրան հասանելի չէին, այդ թվում նաև ԽՍՀՄ արխիվները, արտասահմանյան աղբյուրները»: Մի ժամանակ պետությունն ինքն էր հոգ տանում գրքերի, այդ թվում և գիտական աշխատանքների տպագրության մասին: Այժմ, ավաղ, այդ հոգն ամբողջությամբ հեղինակի ուսերին է ընկած: Գրքի տպագրման բոլոր ծախսերը, ինչպես նաև ռուսերեն թարգմանելու հոգսերը ամբողջությամբ ծանրացած էին Հայկ Ղազարյանի ուսերին: 10 հազար դրամ պրոֆեսորական կենսաթոշակը, բնականաբար, չէր բավականացնում (միայն մեկ քարտեզ կազմելը մոտ 600 դոլար է): Ուստի գիտնականը հարկադրված էր վաճառել բնակարանը և անգամ կահույքը: Եվ մեկ է, գիրքը լույս տեսավ ընդամենը 500 օրինակ տպաքանակով, այդ պատճառով էլ գրքի մատչելիության մասին խոսք լինել չի կարող: Ցավոք, հարկ է փաստել, որ, ասենք, Ադրբեջանում մնան գիրքն անմիջապես կիրառարարավոր հսկա տպաքանակով, իսկ բարձր պետական այրերը հենց իրենք տրցակներով կթափանցեն արտասահմանյան դեսպանատներին... Թերևս արժե, որ և՛ Ազգային ժողովը, և՛ կառավարությունը, և՛ արտաքին գործերի նախարարությունը իրենց «նվիրատվական» ֆոնդում ունենային այդ գիրքը Հայաս-

տանի բարձրաստիճան հյուրերի համար, քանի որ, ինչպես ասում են ավելի լավ է մեկ անգամ տեսնել... Իմիջիայլոց, առաջխաղացում կարծես թե կա: Հայկ Ղազարյանի «Հայ ժողովրդի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում» գիրքը նախատեսված է թարգմանել եվրոպական մի շարք լեզուներով, ընդ որում՝ նաև թուրքերենով (լավ կլինի, որ դա լոկ բարի մտադրություն չմնա): ԳԱԱ-ն դիմել է Հայաստանի կառավարությանը՝ պետպատվերի շրջանակներում վերահրատարակելու նաև հայերեն երկհատորյակը: Հուսանք, որ հայ լայն հասարակայնությունը ևս հնարավորություն կունենա ծանոթանալու այդ գրքին: *Նելսոն ԱԼԵՔՍԱՆՅԱՆ*

## ՎԱՉԳԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ «ՄԵՎ ՅՈՒՑԱԿԻՑ» 6 ՀՈԳԻ ՊԱԿԱՍԵՂ ԵՆ

«27»-ի ոճրագործության վարկածներից մեկն այն էր, իբր Վաչգեն Սարգսյանն իր ամերիկյան այցից հետո բերել էր ԱՄՆ պետդեպարտամենտի կազմած 24 հոգուց բաղկացած ցուցակ, ուր ընդգրկված էին 73 ամենակոռուստացված իշխանավորները, և հասցրել էր այդ ցուցակը ներկայացնել կառավարության անդամներին: Եվ ահա «168 ժամ» թերթը, իր վերջին համարում վկայակոչելով ամերիկյան քաջատեղյակ աղբյուրները, հաղորդում է, որ ԱՄՆ պետդեպարտամենտը մտադիր է ՀՀ իշխանություններին ներկայացնել 18 հոգանոց «սև ցուցակ», ուր ընդգրկված կլինեն առավել կոռուստացված և քրեականացված իշխանավորներն ու օլիգարխները, և այս անգամ ցուցակը տրվելու է նաև «մամուլի բերանը»: Ամենայն հավանականությամբ, և 24, և 18 հոգանոց ցուցակները հիմնականում համընկնում են, և հարց է ծագում, թե ինչու «սև ցուցակից» պակասել են 6 հոգի: Կարելի է ենթադրել, որ 1999-ի ցուցակի մեջ ընդգրկվածների մի մասը կամ այլևս չի պաշտոնավարում, կամ այժմ բնակվում է ՀՀ սահմաններից դուրս: *Գ. Գ.*

## ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆԸ ՀԱՐՍՏԱՅԵԼ Է 3 ՄԻԼԻԱՐԴ ԴՈՒԱՐՈՎ



Ամերիկահայ մեծահարուստ Քըրք Քըրքոյանն, ըստ «Ֆորբս» հանդեսի, աշխարհի մեծահարուստների ցուցակում զբաղեցնում է 41-րդ հորիզոնականը: Եթե անցած տարի Քըրքոյանի ունեցվածքը գնահատվում էր 6 միլիարդ, ապա այս տարի՝ 8,9 մլրդ: Անցած տարի 600 միլիարդատերերի ցուցակում Քըրքոյանը 65-րդ տեղում էր: 2004 թ. Քըրքոյանը 8 միլիարդ դոլարով ծեռք է բերել «Մանդալայ» հյուրանոցներին, կազմիներ և զվարճանքի վայրերի ցանցը, հաղորդում է «Վաշտոնյանը»: 87-ամյա ամերիկահայն ունի երկու դուստր՝ Թրեյսի և Լինդա:

## ԿԴԱՍՎԵՆ ՍՐԲԵՐԻ ՇԱՐՔԻՆ

Մայր Աթոռ Սբ Էջմիածնում ստեղծվել է հատուկ հանձնախումբ, որն աշխատանքներ է տանում Հայոց ցեղասպանության զոհերին Հայ եկեղեցու սրբերի շարքին դասելու համար: Իսկ մինչ այդ, ինչպես երկեղ նշեց Ամենայն Հայոց կաթողիկոս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ-ն, Մայր Աթոռի նախածեռնությամբ ապրիլի 24-ին Երևանի Մայր եկեղեցում Սբ Սարգիստում, կկազմակերպվի զոհերի հիշատակի ոգեկոչման արարողություն: Հանդիսությունը կմասնակցեն նաև Հայ եկեղեցու բոլոր թեմերի վեհափառ տերերը:

*ՄԱՅՐ ԱԹՈՐԻ ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ*

## ԳԵՊԻ ՌՈՒՍԱՍՏԱՆ

Վլադիմիր Պուտինն այն կարծիքին է, որ Ռուսաստանի համար գաղթի քաղաքականությունը բարելավելու բնական միջոց է ԱՊՀ երկրների բնակիչներին ներգրավելը: «Համագործակցության պետություններից եկած մարդիկ կարող են լրջորեն ամրապնդել ինտեգրացիոն կապերը», - ասել է Ռուսաստանի նախագահը՝ ելույթ ունենալով ՌԴ Անվտանգության խորհրդի նիստում: «Մեզ համար դա ամենաբնական եղանակն է: Մեզ համար կարևոր չեն կրոնը, մաշկի գույնը: Կարևորն այն է, որ բոլոր այդ մարդիկ ռուսաց լեզվի կրողներ են և ոչլուրջությամբ հարմարվում են Ռուսաստանի կյանքին», - ասել է նախագահ Պուտինը:

*ԱՐՄԵՆՊՐԵՍ*

## ԽԱՉԲԱՌԸ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՔՆԱԲԵՐՆ Է

Քնի մեխանիզմը նորագույն մեթոդներով ուսումնասիրելու արդյունքում անսպասելի եզրահանգման են եկել Վիսկոնսին-Մեդիսոն համալսարանի գիտնականները: Նրանք պնդում են, որ խաչքառ լուծելը նպաստում է խոր և հանգիստ քնելուն: Դետաքրքրական է, որ ուղեղի տարբեր հատվածները, կախված օրվա ընթացքում իրենց ստացած ինֆորմացիայի քանակից, տարբեր կերպ են քնում: Ուղեղի այն բջիջները, որոնք օրվա ընթացքում ստիպված են եղել ավելի շատ «տքնել», քնում են շատ խորը և գործնականում «ամբողջությամբ անջատվում» են: *Ներկայացրեց Լևոն ԳՐԱՂՆԱՆԸ*

# ՄԵՐ, ՆՎԻՐՈՒՄ, ԳՈՒՄԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔ



Ակնթարթն էլ բավական է, որպեսզի հերոս դառնաս, սակայն մի ամբողջ կյանք է հարկավոր, որ դառնաս արժանավոր մարդ...

*Քրյուլայ*

Երբ խոսվում է մարդու բարձրագույն հատկանիշների մասին, որոնք օրենքով չեն չափվում, դրանք միշտ բաղդատվում են աստվածային որակների հետ, քանզի Վանդոս մարդը պայմանավորում է իր ազգի իրական արժեքը, տեսակարար կշիռը, այլ ազգերի հետ համաշխարհային համահավաք երթում:

Վանդոս Ղարազյոզյան ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիայի կոմիտեի անդամ, միջազգային բարձրագույն կարգի մրցավար, ծանրամարտի Հայաստանի ֆեդերացիայի փոխնախագահ, Լոռու մարզի ծանրամարտի ֆեդերացիայի նախագահ ՅՈՒՆԵՍԿՕ-ի դոկտոր, Մոսկվայի հումանիտար ակադեմիայի ակադեմիկոս Կենսապահովման անվտանգության և բնապահպանության գիտությունների միջազգային ակադեմիայի ակադեմիկոս: Ի դեպ, այդ բարձր պատվին նա արժանացել է աշխարհում եզակի ու մեծ ճանաչում գտած «Ծանրամարտ» օլիմպիական խաղեր, աշխարհի և Եվրոպայի առաջնություններ» գիրք-հանրագիտարանի համար, որի երկրորդ հատորը նվիրված է ծանրամարտի միջազգային մրցաշարերին, Հայաստանի առաջնություններին: Լույս է տեսել հայերեն և անգլերեն լեզուներով: Մարզաշխարհում ծանրակշիռ աշխատանքի համար Ամերիկայի կենսագրական ինստիտուտը Վանդոս Ղարազյոզյանին արժանացրել է իր սահմանած «Հազարամյակի ոսկե մեդալ» մրցանակին:

Գիտական մարզաշխարհում կատարած շնորհակալ աշխատանքի և ունեցած փայլուն արդյունքների համար վերոհիշյալ ինստիտուտի կողմից արժանացել է 2000թ. «Տարվա մարդ» տիտղոսին:

Հռչակավոր գիտնականներ ու մարզիկներ բարձր են գնահատել եզակի այդ հրատարակությունը, իսկ ծանրամարտի Եվրոպայի ֆեդերացիան արժանացրել է շնորհակալագրի ու ֆեդերացիայի 30-ամյակի մեդալի:

Խոսելով Կիրովական-Վանաձոր քաղաքի մարզական (և ինչու միայն մարզական) հարուստ ու բեղմնավոր էջերի մասին՝ չի կարելի չըջանցել մի անուն, որի հետ է կապված քաղաքի, մարզի հաջողություններն ու առաջընթացը: Կռահեցի՞ք այդ անունը՝ Վանդոս Ղարազյոզյան:

Զնայած բոլորում է իր 65 տարին, բայց հոգով տակավին երիտասարդ է, առույգ ու կենսախիմ: Կասեք, թե ծեծված նախադասությունների շարան է, որ գրվել է 65, 165, 1065 անգամ: Նրա մասին շատ է գրվել. միութենական, միջազգային, հանրապետական մամուլում: Միզուցե այս անգամ կարելի էր խուսափել միօրինակ այդ արտահայտություններից: Բայց այս մարդու պարագայում չեն կարող չասել նույնը, քանի որ նրա արտաքինը, պահվածքը, գործունեությունը չեն հիշեցնում հիշյալ տարիքը: Տարիք, կյանք, գործունեություն, որն անմնացորդ նվիրել է հայ ժողովրդին, հայրենի քաղաքին: Կյանք, որ մաքառման, արարման պատմություն է:

Վանդոս Ղարազյոզյանի, որպես անհատի, հասարակության մեջ կայացումը սկսվեց այն ժամանակ, երբ նա կարևորեց հասարակության մեջ իրեն ստեղծագործ անհատ իր կայանալու անհրաժեշտությունը: Հայեցողական կերտվածքի հաղթահարումը, արդեն իսկ դեպի առաջ նայելու, օրվա մեջ եղածը ճիշտ տեսնելու, այսօրը վաղվա հետ կապելու խիզախությունը թույլ տվեց նրան փոքր նախաձեռնություններից անցնել մեծ գործերի («գործ» բառն էլ այնքան սովորական արտահայտություն է դարձել, որ մնայուն երևույթների մասին խոսելիս չի կարողանում համապարփակորեն բնորոշել եղելությունը):

Իսկ մեծ քննությունը եղան ետերկրաշարժյան աղետալի օրերն ու տարիները, որոնք էլ նրան մեծ ճանաչում բերեցին. բնակչության ծանր հոգսերին մեցուկ լինելու իր պարտականությունները մինչ օրս էլ նա կատարում է սրբորեն, ինքնամոռաց:

Նա հայրենի քաղաքի վերականգնման առաջին կազմակերպիչներից է: Նույնպիսի նվիրումով մասնակցել է Արցախյան շարժմանը:



Մի առիթով մեր համաքաղաքացի լրագրող Սամվել Խալաթյանը գրել է. «Ասում են՝ ճակատագիրը շատ բան է տվել ժամանակավոր օգտագործման համար, իսկ ընդմիշտ՝ ոչինչ: Թվում է՝ անբննելի է այս իմաստությունը: Այնուամենայնիվ կարծում ենք, վերապահումները բացառելի չեն: Մանավանդ, երբ խոսքը վերաբերվում է Մեծերին»:

Այդպիսի Մեծերից է Վանդոս Ղարազյոզյանը: Նա երբևէ չի ձգտել փառքի... Բայց հասել է նրան՝ բարությանը ու նվիրումով ծառայելով իր ժողովրդին, որն էլ... անցողիկ չէ:

*Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ*

# «Հովարդ Կարագյոզյան» հիշատակի ընկերակցության Վանաձորի բուժհաստատություն

Մերձավորի նկատմամբ բարի կամքն է աշխարհը տանում առաջ և երանի նրանց, ովքեր իրենց բարի գործով մասնակից են աշխարհի առաջընթացին:

«Հովարդ Կարագյոզյան» բարեգործական կազմակերպությունը, որն ունի 84 տարվա պատմություն, Հայաստանում հայտնի է Սպիտակի երկրաշարժից հետո իրականացրած մեծածավալ ծրագրերով:

Ժամանակի ընթացքում օգնության եկած բարեգործական կազմակերպություններից քչերը մնացին իրենց առաքելության բարձունքում, քչերը մնացին իրենց կոչմանը հավատարիմ, և այդ քչերից մեկն է «Հովարդ Կարագյոզյան» հիշատակի ընկերակցությունը՝ 1992 թվականից Հայաստանում հիմնած իր կազմակերպությամբ: Մնաց, որովհետև պարզապես առանց քաղաքական շահարկումների, առանց շեփոհարելու՝ լուռ նվիրումով սկսեց իրականացնել առողջապահական ծրագրեր, որոնց թվում առաջնային է դիտվել մանկական ատամնաբուժական օգնության կազմակերպումը:

Այդ ոլորտը, քանզի աշխարհում ամենաթանկը համարվող այս բուժօգնությունը անհասանելի է սոցիալական դժվարին պայմաններում հայտնված բնակչության զգալի մասի համար:

Հայաստանի տարբեր մարզերում, Արցախում բացված կլինիկաների կողքին հիմնվեց նաև Վանաձորի ատամնաբուժական կենտրոնը:

Այդ նպատակով քաղաքի կենտրոնում գտնվեց 350 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով մի շենք, որտեղ պատշաճ վերակառուցումից հետո, վերջին սերնդի սարքավորումներով կահավորեցին ատամնաբուժական, պատահանման կաբինետներն ու գրանցման բաժինը: Իսկ պանոթամիկ դիմագծային ամբողջական ռենտգենի կաբինետը երևակյան սենյակով տարածաշրջանում եզակիներից է:



- Վանաձորում զգալիորեն պակասել են մանկական ատամնա-հիվանդության դեպքերը և արդեն դա կարելի է համարել «Հովարդ Կարագյոզյան» բարեգործական կազմակերպության մանկական ատամնաբուժարանի ամենամեծ ձեռքբերումներից մեկը, - գոհ կատարված աշխատանքներից ասում է բուժաստատության պատասխանատուն՝ ավագ բժիշկ, բժշկական գիտությունների թեկնածու Իրինա Ղանբարյանը (ի դեպ Վանաձորի ատամնաբուժներից միակը, որ ստոմոտոլոգիայի գիտությունների թեկնածու է, գիտական 6 հրապարակումների հեղինակ ու համահեղինակ, որոնք լույս են տեսել «Տեղական և կլինիկական բժշկության հարցեր»-ի էջերում) ու ավելացնում. «Եթե հիմնադրման առաջին տարում այստեղ այցելում էին կարիեսի բարդացած տեսակներով և հիվանդ ատամին հրաժեշտ տալու մտադրությամբ, ապա այսօր այցելումների հիմնական մասը գալիս է կանխարգելիչ ստուգման: Իր գործին գիտակ երիտասարդ բժշկուհին նշում է այս փաստը, պարզաբանելով, որ տարածաշրջանի բնակլիմայական պայմանների պատճառով շատերի



օրգանիզմում պակասում է առողջ ատամների գրավականը՝ ֆտորը:

Իրինա Ղանբարյանը հպարտանում է, ասելով. «Հաստատությունը դարձել է մանուկների թիվ մեկ բարեկամը»: Իրոք, կազմակերպության ղեկավարների և անձանք բուժաստատության տնօրեն Կամո Տեր-Պետրոսյանի ջանքերով կազմակերպության առաքելությունը դարձավ շարունակական ու հետևողական: Այս մարդու՝ աշխատանքին նվիրված ու սրտացավ մոտեցման արդյունքն էր, որ կարճ ժամանակամիջոցում անախաղեպ առաջընթաց արձանագրվեց Կարագյոզյան ընկերակցության հայաստանյան գործունեության մեջ: Մեկը մյուսի հետևից բացվեցին Գյումրիի, Գորիսի, Ստեփանակերտի, Երևանի և Վանաձորի Կարագյոզյան ատամնա-ակնաբուժական բարեգործական հասարակական բուժհաստատությունները: Գործին նրա պրոֆեսիոնալ մոտեցման արդյունքն է, որ վերոհիշյալ բուժհաստատություններում աշխատում են իրենց գործին գիտակ արհեստավարժ մասնագետներ:

Նման նշանակության ձեռնարկման կարիք մեր երեխաները վաղուց էին զգում և պահատական չէր, որ հաստատությունը դարձավ ոչ միայն անմրցելի բուժհիմնարկ, որը մասնագիտական բանիմացության արդյունք է, այլև երեխաների շրջանում հերքեց այն թյուրըմբռնումը, թե ատամնաբուժարանը կամ բժիշկները ընդհանրապես «սարսափելի են»: Հարկ է միայն տեսնել, թե բարի խոսքից, ջերմ հայացքից քաջալերվող փոքրիկները ինչ «հերոսական» դիրք են ընդունում բուժբազմաթոռին, դրանով իսկ բուժման ժամանակ օգնում բուժող բժշկի գործողություններին:

Ստանում են՝ ինչպե՞ս, ի՞նչ ներքին ուժով են կարողանում երիտասարդ բժիշկները ներշնչել մանուկներին, անբեկանելի հավատ ներարկել և բուժման հաջողությունն ապահովել դեռ գործի սկզբնափուլում:

Մանուկները այստեղ ապահովված են անհրաժեշտ դեղորայքով, իսկ առաջին այցին երեխաներին բաժին է հասնում բարերարների խորհրդանիշով նվերը՝ անհրաժեշտ մածուկն ու խոզանակը: Ատամնաբուժությանը զուգահեռ, 2000 թվականից Կարագյոզյան ընկերակցությունը Հայաստանում նախածնեմել է բժշկական մի նոր ծրագիր և՛՝ մանկական ակնաբուժության: Ատամնաբուժությունից բացի հայաստանցի մանուկները նույնքան կարիք ունեին նաև ակնաբուժական ծառայության, որը նույնպես բժշկության ծախսատար ճյուղերից է: Էներգետիկ ճգնաժամի մուօ ու խավար տարիները իրենց բացասական հետևանքներն են թողել երեխաների տեսողության վրա: Սա առավել ևս զգալի է աղետի գոտում կապված սարեսային վիճակների, բնակարանային և դպրոցական տնակային պայմանների հետ: Ուստի որոշվում է Հայաստանում որպես երկրորդ առողջապահական ուղղություն զարգացնել ակնաբուժությունը: Կարագյոզյան ատամնաբուժարաններին կից բացել ակնաբուժարաններ և զբաղվել նաև երեխաների տեսողության հետ կապված

պրորելեմներով:

Ծրագիրը սկսեց իրագործվել աղետի գոտուց: 2000թ. բացվեց Գյումրիի Կարագյոզյան ակնաբուժարանը, նույն փորձը մեկ տարի անց կիրառվեց նաև Վանաձորում, ատամնաբուժարանի հետ նույն հարկի տակ:

Օրվա ընթացքում այստեղ այցելում է միջին թվով 75 երեխա: Հաշվի առնելով պահանջարկը, բուժաստատությունը ընդարձակել է իր գործունեությունը՝ անվճար ատամնաբուժական ծառայություններ առաջարկելով ոչ միայն Վանաձորի մինչև 14 տարեկան բոլոր երեխաներին, այլև Լոռու մարզի մյուս բնակավայրերի հաշմանդամ, երկկողմանի կամ միակողմանի ծնողազուրկ, նպաստառու ընտանիքների մինչև 14 տարեկան երեխաներին ևս:

Սոցիալապես անբարենպաստ ժամանակներում այս բուժաստատությունը իսկապես որ օազիս է անապատում: Դրա վկայություններն են կոլեկտիվին հղված շնորհակալագրերը Վանաձորի քաղաքապետից, տարբեր կազմակերպություններից, ծնողների անկեղծ ու երախտագետ մաղթանքները Աստծո ամեն օր...

Գուցե հենց ա՛յս մասին էին երազում «Կարագյոզյան ընկերակցության» հիմնադիր Միհրան և Զապել Կարագյոզյանները, երբ դեռևս 1921 թվականին Նյու-Յորքում հիմնում էին իրենց վաղամեռիկ որդու՝ 14-ամյա Հովարդի հիշատակին նվիրված կազմակերպությունը:

L. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Նկարներում՝ բժշկուհի Իրինա Ղազարյանը և տնօրեն Կամո Տեր-Պետրոսյանը

# Մեծ աշխարհի փոքրիկ անկյուն



Ծերանոցը կարոտ է շեր հայացքին  
Ի՞նչ երեխա է մարդը: Ինչպես է թեկուզ  
մի հայացք փափագում:  
Ի՞նչ երեխա է մարդը...

Գյոթե

Քանի փոքր ենք, լաց բղավոցով սեր, գուրգուրանք ենք պահանջում: Հասունանում ենք ու փնտրում մեկին, որին կարողանանք նվիրվել և մեր նվիրվածությամբ ճշտել, որ ինչ որ մեկին իսկապես պետք ենք, որ առանց մեզ ինչ որ բան ինչ որ տեղ սխալ կլինի:

Տարիների հետ մարդն ավելի վճռական է ուզում իրեն արժեքավորված զգալ և սեր-ուշադրություն է որոնում անգամ անծանոթի մոտ:

- Հայերս հպարտանում ենք այն ամենով, ինչը մեր բնույթին ու մաշկի գույնին, մեր արյանն ու հայի սրտին է բնորոշ: Ղեկավարվում ենք բարոյական օրենքներով: Սակայն ամեն տեսակի օրենք դատապարտված է ձևականության, եթե այնտեղ չկա հոգի ու սրբություն:

- Ինձ ոչինչ պետք չէ, բայց որ մի անգամ հարցնում են. ո՞նց ես, - մեծ, շատ մեծ հոգեկան բավարարվածություն եմ զգում, - ասում է Ամերիկայի «ՀԱՅ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴ»-ի Հայաստանի մասնաճյուղի Վանաձորի ծերանոցի բնակիչներից մեկը: Ասում է մեկը՝ կարդում ես բոլորի հայացքում:

Նայում ես այս ծերերին, ու տագնապում վաղվա օրվա համար: Ի՞նչ կկատարվի Հայաստան կոչված այս փոքրիկ տարածքում, եթե ծնողաբացությունը մարդկանց հոգիներում էլ ավելի խորը խրի իր ճանկերը: Ժամանակը չ'է սթափվել, վերջ տալ նմանատիպ կարծրատիպությանը, մեր ազգային հոգեբանությունը

թոթափել՝ ծնողին այդքան հեշտ ու դյուրությամբ լքելու ահավոր այս ախտից: Այսօր առավել, քան երբեք, պատասխանատվություն, ու սրբությունը հարգելու խիզախություն ունենանք:

ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի Վանաձորի ծերանոցը (որը մինչև 2002թ մայիս ամիսը անվանվել է «Ազնավուրը Հայաստանին» բարեգործական հիմնադրամի Վանաձորի ծերանոց, քանզի այդ մեծ ազգասերի հովանավորությամբ ու անձնական միջամտությամբ իրագործվեց մարդասիրական այս ծրագիրը) իր հարկի տակ ապաստան է տվել հիսունից ավելի ծերերի: Այստեղ, աշխարհից ու բախտից մի քիչ խռով, հիսունից ավելի ծերեր, աշխարհի ու իրենց բախտի հետ մի քիչ հաշտված ապրում են նույն ծածկի տակ, քիմիական մանրաթելերի գործարանի նախկին հանգստյան տան վերանորոգված, հարմարավետ կահավորված մասնաշենքում:

Ապրում են ավելի շատ ուշադրության ու ջերմության կարիք ունեցող ամենասովորական մարդիկ՝ անհատական իրենց յուրահատկություններով:

Վաստակաշատ բժշկուհի, բժշկական գիտությունների թեկնածու, մի անուշախոս մայրիկ՝ Սիրանուշ Արմաղանյանը, կպատմի գիտության մեջ իր հասած հաջողությունների մասին, տարբեր ազգերի սովորություններից, որտեղ իրեն բախտ է վիճակվել գտնվել, բայց կշեշտի, որ իր ազգը ուրիշ է՝ մեր մարդիկ բարյացակամ են ու ընդառաջող, ինչպես իրենց տնօրենը՝ Տիգրան Քո-

# Հայաստանի հանրապետությունում ոչ աշխատանքային տոնական եւ հիշատակի օրեր են՝

- 1) դեկտեմբերի 31-ը, հունվարի 1-ը և 2-ը՝ Ամանոր
- 2) հունվարի 6-ը՝ Սուրբ ծնունդ և Հայտնություն
- 3) հունվարի 28-ը՝ Բանակի օր
- 4) մարտի 8-ը՝ Կանանց տոն
- 5) ապրիլի 24-ը՝ Ցեղասպանության զոհերի հիշատակի օր

- 6) մայիսի 1-ը՝ Աշխատանքի տոն
- 7) մայիսի 9-ը՝ Հաղթանակի և խաղաղության տոն
- 8) մայիսի 28-ը՝ Հանրապետության տոն
- 9) հուլիսի 5-ը՝ Սահմանադրության տոն
- 10) սեպտեմբերի 21-ը՝ Անկախության տոն:

### չարյանը:

Ռաֆայել Արմաղանյանը կասի. «Ո՞վ է ասել ու որոշել, որ ծեր լինելը նշանակում է դուրս գրված լինել»: Կկարդա իր հեղինակած բանաստեղծությունները, այդ թվում՝ ծերերի «հիմն» դարձածը.

*Որքան կուզե խոսքեր ասեք վերամբարձ  
Հետ չի գալու, կյանքը անցնում է անդարձ,  
Քար ենք դնում մեր գլխի տակ, մոռացել ենք արդեն բարձ  
Կյանքի օրերն ենք մենք հաշվում, ինչպես մահին տրվող վարձ:*

Սովորական մարդիկ, որոնց արտասահմանցի հյուրերն ու բարերարները ավելի հաճախ են տեսակցում, նրանցով հետաքրքրվում ու քեֆ-հալ հարցնում: Իսկ մենք ... չէ՞ որ նրանք կարոտ են մեր հայացքին, մեր ջերմ խոսքին:

Տնօրեն Տիգրան Քոչարյանը նշում է (բարի ու հոգատար անձնավորություն), որ ծերանոցը մի մեծ տուն է, մեծ աշխարհի իրենց փոքրիկ անկյունը, որտեղ ապրում են ծերերը՝ սիրո և հոգատարության անկկալիքով: Իրենք աշխատում են բաց չթողնել ուրախամայու առիթները: Փորձում են յուրաքանչյուր օրը տոնի վերածել: Ծերերի համար շուքով նշում են տոներ, առիթներ, նույնիսկ հարսանիք են արել...

Այնուհետև նա հպարտությամբ հայտարարում է .  
- Մենք ոչ ոքից օգնություն չենք խնդրում: Միայն քիչ թե շատ դիրք ու կշիռ ունեցող մարդիկ էլ հիշեն այս ծերերին, այցելեն նրանց: Հին խոսք է . «Փողը երբեք շատ չի լինում»: Իրոք, ծախսերը անպակաս են, բայց երևի եկել է երեսը դեպի ժողովուրդը դարձնելու ժամանակը:

Հավատացնում են, մեծ ու աստվածահաճ գործ կատարած կլինենք: Ժողովրդին արդեն հայտնի են բարերարների անուններ, ինչու չհամալրել նրանց շարքերը:

Եկեղեցու զանգերի ղողանջի պես, մեր ականջներին պետք է կրկնվի. «Սրբություն ու զթություն ամենից ավելի հայերիս է պետք»: Եվ խորհել տալ ամենքիս, որ դրանք մանրուկներ չեն: Բարեգործական հիմնադրամները բարեգործական, իսկ պետական աջակցություն...

Մենք բարոյական իրավունք չունենք քաղցրացնել մեր կերպարները, ինքնահիացական քաղցրախոսությամբ զբաղվել: Իրավունք չունենք խոսել մարդկային արժեքներից, եթե մեր գործունեության դրդիչը մարդը չէ, երկրային, երկրի քաղաքացին կոնկրետ խնդիրներով:

Անտեսել մարդուն՝ նշանակում է «հարվածել» նրան: Իսկ «հարվածը» այս պարագայում մահացու է: Որտեղից և ինչպես են կուտակվում այդ «հարվածները»՝ լուռ, իրենք իրենց մեջ ամփոփված ու կծկված մարդկանց՝ այս հնազանդ տառապալների գլխավերևում: Հետո ինչ, որ լուռ են, հետո ինչ, որ հնազանդ են ու համակերպված:

Որպես վերջաբան՝ ասեմ ու նորից ասեմ՝ հիշեցնելով: Վանածորի անդորրավետ մի անկյունում՝ մարդկային աչքից մի քիչ հեռու ապրում են մեր ուշադրությանը կարոտ ծերեր: Մի՞ թողեք նրանց Ձեր սրտից ու խղճից հեռու, որպեսզի չզգան նրանք.

Բյուր մարդոց մեջ,  
Պաղ մարդոց մեջ,  
Որպես տրտում  
Անապատում,  
Մենակություն  
Մենակություն....

Լևոն ԽԱՉՍՏՐՅԱՆ

## Աղքատացած Հայաստան

Վերջերս BBC-ի ինտերնետային կայքի ռուսական բաժինն անդրադարձել է Հայաստանի ներկայիս տնտեսական վիճակին: Հոդվածագիր Սթիվեն Իկը ընդգծել է, որ ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանն ասել է, թե այժմ Հայաստանի գոյատևումը կախված է արտերկրում ապրող հայերի ուղարկած գումարներից: Հոդվածագիրը նաև նշում է, որ վերջին տասը տարվա ընթացքում Հայաստանից հեռացել է մոտ մեկ միլիոն մարդ: «Իսկ Հայաստանն այժմ հայտնվել է խորը ճգնաժամում», - ավելացնում է Իկը, որին ՀՀ ԿԲ աշխատակիցներն ասել են, թե վերջին տնտեսական աճը հիմնականում պայմանավորված է արտասահմանում ապրող հայերի ուղարկած գումարներով: «Համաշխարհային բանկի գնահատականի համաձայն, Հայաստանի բնակչության կեսը աղքատ է, իսկ յուրաքանչյուր չորրորդ հայաստանցին ապրում է բացարձակ աղքատության պայմաններում», - ավելացնում է Սթիվեն Իկը: Նա նաև գրում է, որ հայաստանցի տնտեսագետների մի մասը համոզված է, որ արտասահմանից Հայաստան փոխանցվող գումարները միայն քողարկում են առկա սոցիալ-տնտեսական խնդիրները և խոչընդոտում տեղական արդյունաբերության զարգացմանը: «Այսուհանդերձ, մեկուսացված, փոքրատարածք այս երկրի համար դրամային փոխանցումները փրկություն են, քանի որ Խորհրդային Միության փլուզումը, ինչպես նաև Թուրքիայի և Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակումը Հայաստանին աղքատացրել են», - գրում է BBC-ն և հիշեցնում, որ խորհրդային տարիներին Հայաստանը անվանում էին սիլիկոնային հովիտ:

## Կյանքի միջին տևողությունը աշխարհում

- 1. Ճապոնիայում՝ 81, 3 տարի է
- 2. Շվեդիայում՝ 79, 9
- 3. Կանադայում՝ 79, 2
- 4. Իսպանիայում՝ 79, 1
- 5. Ավստրալիայում՝ 79
- 6. Իսրայելում՝ 78, 9
- 7. Ֆրանսիայում՝ 78, 7
- 8. Իտալիայում՝ 78, 6
- 9. Մեծ Բրիտանիայում՝ 77, 9
- 10. ԱՄՆ-ում՝ 76, 9

Ըստ էության, պրոֆեսոր Մարմոտը զարգացրել է նշանավոր Դեյլ Կարնեգիի այն միտքը, թե մարդու արարքների շարժիչ ուժը սեփական եսի նշանակության կարևորությունն է. ում հաջողվում է՝ ավելի երկար է ապրում:

Ներկայացրեց Լևոն ԳՐԱՂՅԱՆԸ

# «Գեղարվեստի կրթօջախն էլ ունի խնդիրներ, որոնք ֆինանսական ներդրումներ են պահանջում»



Վանաձորի Ստ.Աղաջանյանի անվան գեղարվեստի դպրոցը հիմնադրվել է 1957 թվականին՝ հայ կերպարվեստի նահապետի՝ Սարտիոռու Սարգսյանի և մեծանուն քանդակագործ Արա Սարգսյանի ջանքերով:

Շուրջ 1300 շրջանավարտներից շատերը այսօր հանրապետության անվանի նկարիչներ են, քանդակագործներ, ճարտարապետներ: Իր կենդանի հոբբեյանը կրթօջախը ստադիոն է նշել պատշաճ հանդիսավորությամբ: «Նպատակ ունենք դպրոցի պատմության հետաքրքիր դրվագների մասին տեղեկացնող գրքույկ հրատարակել: Ակնկալում ենք, որ մեր դպրոցի նախկին սան-համաքաղաքացիները կօժանդակեն մեզ արժեքավոր տեղեկությունների և նյութերի ձեռքբերման հարցերում», - «Գործարար»-ի հետ զրույցում նշեց դպրոցի նորանշանակ տնօրեն, ԽՍՀՄ և Հայաստանի նկարիչների միության անդամ, ՎՊՍԻ-ի կերպարվեստի բաժնի դասախոս Արսեն Ռաֆայելյանը:

Այսօր դպրոցում, ըստ ծրագրի, ընդգրկված է վեց առարկա՝ գծանկար, ստեղծագործություն, դեկորատիվ արվեստ, քանդակագործություն, կերպարվեստի պատմություն, իսկ վերջինը՝ հաստոցային գրաֆիկան մոռացումից ուզում է փրկել դպրոցի երբեմնի սան, այսօրվա տնօրեն Արսեն Ռաֆայելյանը: «Այս առարկայի դասավանդման համար անհրաժեշտ սարքավորումները առայժմ չունենք, ինքնաշեն-հնարամիտ միջոցներից ենք օգտվում», - ասում է Ա. Ռաֆայելյանը և շարունակում. «Ստեղծագործողը պետք է ունենա համառություն իր մտահղացումներն իրականացնելու համար, ինչ-որ տեղ արհամարհելով կենցաղային դժվարություններն ու կենսամիջոցների հայթայթման հրամայականը: Քանզի դրա պատճառով շատ տաղանդավոր մարդիկ են հեռացել արվեստից, հեռացել հայրենիքից»:

«Դպրոցի նպատակն է ոչ միայն սովորեցնել ճիշտ նկարելու տեխնիկան ու հմտությունը, այլև երեխաների մեջ բերրոջ տեղեկագործելու կայծը, ներարկել անսահման նվիրում, որ պահանջում է արվեստը»:

Չնայած նյութական դժվարություններին, գեղարվեստով զբաղվել ցանկացողների աճող թիվը, տնօրենի հավաստմամբ, վկայում է, որ կհաղթահարվի ժամանակավորապես տեղ գտած հոգևոր նահանջը:

Թեև ուսման վարձը տարվա համար հայաստանաբնակի համար «կլորիկ» գումար է՝ 13500 դրամ, բայց քաղաքապետ Ս.Դարբինյանի կողմից սահմանվել են արտոնություններ՝ երկ-կողմանի ծնողագուրկ՝ զոհված ազատամարտիկների երեխա-

ները սովորում են անվճար: Իսկ չորս և ավելի անչափահաս երեխաներ ունեցող ծնողների, հաշմանդամ ազատամարտիկների երեխաները այդ գումարի կեսի չափով:

«Ինչպես այլ կրթօջախներում, մեր դպրոցում էլ կան խնդիրներ, որոնց լուծումը ֆինանսական ներդրումներ է պահանջում, - ասում է Արսեն Ռաֆայելյանը: Առաջարկություններով ուզում են դիմել քաղաքապետին: Չեն կասկածում, որ հնարավորության դեպքում կաջակցի մեզ: Նպատակ ունենք հիմնել խեցեգործության փոքրիկ արտադրամաս, որին հնարավոր է վերանորոգումից հետո համապատասխանեցնել մեր լքված մասնաշենքը: Հարկ կլինի մակ թոժման վառարան ձեռք բերել: Հետաքրքիր և գործնական նորամուծություն կլինի գորգագործության արտադրամասը, որի ստեղծման համար ընդամենը երկու ոչ մեծ դազգահն էլ բավական է: Սրանք կոնկրետ քայլեր կլինեն ոչ միայն ազգային դեկորատիվ արվեստի ուսուցման համար, այլև փոքրիկ նյութական աղբյուր կդառնան դպրոցի ներքին պահանջների բավարարման համար»:

Քանի որ «Գործարար»-ը տարածվում է Ռուսաստանի ֆեդերացիայի տարածքում սփռված հայկական համայնքներում, այն կարող է մեր հազարավոր համաքաղաքացիներ, որոնց մեջ միզուցե կգտնվեն մակ դպրոցի նախկին սաներ, գործարարներ, ուստի դիմում ենք նրանց, կոչ անում սատար կանգնել, աջակցել, օժանդակել դպրոցին, երիտասարդ տնօրենին:

Կրթօջախի փորձառու մասնագետներ Ջենֆիրա Մոսիսյանը, Էմմա Ռսկանյանը, Արամ Մարգարյանը և Մարիամ Ամիրխանյանը տնօրենի հետ միասին վստահ են, որ դպրոցում կպահպանվեն, կգարգանան ու կշարունակվեն լավագույն ավանդույթները:

Այլ կերպ չի էլ կարող լինել, չէ՞ որ դպրոցը Վարպետի օրհնությանը է ստեղծվել, չէ՞ որ ի դեմս Արսեն Ռաֆայելյանի, այն ամուր ու վստահելի ձեռքերում է:

Դպրոցի սաները իրենց մասնակցությունը կունենան այս տարի հանրապետությունում նշվելիք հոբբեյանական հայոց գրերի ստեղծման 1600, Սեծ եղեռնի 90, Հայրենական մեծ պատերազմում հաղթանակի 60-ամյակներին նվիրված տարելիցներին: Լավագույն աշխատանքները տեղ կգտնեն քաղաքային և հանրապետական տարբեր պատկերասրահներում:

Իսկ առավել շնորհալիները անմասն չեն մնա «անակնկալ» մրցանակներից:

Լևոն ԽԱՉԱՏՐՅԱՆ

## ՆՎԵՐ ՓՈՔՐԻԿՆԵՐԻՆ

Խնկո-Ապր անվան գրադարանում տեղի ունեցավ Սիլվա Կապուտիկյանի «Փոքրիկ Արա, ականջ արա» գրքի շնորհանդեսը: Գրադարանի դահլիճում «ասեղ զցելու» տեղ չկար: Բանաստեղծուհուն ողջունելու էին եկել բազմաթիվ դպրոցականներ, մշակութային և քաղաքական գործիչներ: Գիրքը հրատարակվել էր «Սիլվա Կապուտիկյան» հիմնադրամի նախաձեռնությամբ: Հիմնադրամի տնօրեն Ռաֆայել Կոզմոյանը նշեց. «Այսօր հայ մանուկի պահանջը լցված է «ռոբերով», «օքեյներով», «սուպերմարքեթներով», «ապեկով» ու «արա վալով»: Մենք պետք է նպաստենք մեր մատաղ սերնդի աշխարհընկալմանը, ինչպես մակ հարկի լեզվով արտահայտվելուն»: Այս բանաստեղծական ժողովածուում ծաղկաքաղ էր արված Կապուտիկյանի գրքերից: Ըստ գրադարանի փոքրիկ ընթերցողների, գրքում տեղ գտած բանաստեղծություններն արդեն ծանոթ են իրենց: Գրադարանի տնօրեն Ռուզան Տոնոյանը նշեց, որ Ս. Կապուտիկյանի գրքերը միշտ էլ մեծ պահանջարկ ունեցել գրադարանում: Դրան նպաստում են մակ դպրոցական ծրագրերը, քանի որ գրականության գրեթե բոլոր դասագրքերում անդրադարձ կա բանաստեղծուհու երկերին:

# «ԲՈՂՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻ ԾԱՂՐԱԾՈՒՆ» Լեոնիդ Ենգիբարյան-70

Ծաղրածուների արքա Լեոնիդ Ենգիբարյանին հիշելիս աչքիդ առաջ է հառնում հաճելի դիմագծերով, մանկան թափանցիկ հոգով, բարի աչքերով, բացառիկ տաղանդի տեր մի երիտասարդ, որին շատ սերունդներ պիտի համարեն իրենց ուսուցիչը, որի չօերացող արվեստը դեռ երկար ճանապարհ ունի անցնելու:

Շատ կարճ կյանք ունեցավ աշխարհաճանաչ ծաղրածուն, ավելի կարճ նրա ստեղծագործական գործունեությունը: Արտիստը հրաժեշտ տվեց կյանքին, երբ նոր էր բոլորել ընդամենը 37-ը, սակայն, արդեն արժանացել էր իր արվեստի բոլոր դափնիներին: Ծաղրածուների արքան էր, չափել էր միջազգային մրցույթների բազմաթիվ դափնիներ, ժողովրդական արտիստ էր ու ժողովրդի շատ սիրելի անձնավորությունը, որովհետև ասելիք ուներ և այդ ամենը նա հարուստ երևակայությամբ, բազմակերպ մատուցում էր ենգիբարյանական յուրատեսակ քուրայով անցկացրած, ինքնատիպ ոճով ու արտասովոր ունակությամբ:

Լ. Ենգիբարյանը ծաղրածուին ազատեց ընդհանրական կերպար հասկացությունից և տվեց նրան անհատականություն: Նա ծաղրածուական արվեստ բերեց նոր մտածելակերպ, որով ծաղրածուն արդեն արվեստի երևույթ էր, որն էլի ավանդական ծիծաղն էր բաժանում մարդկանց, սակայն արդեն որպես արվեստագետ, որպես խորհող ու փիլիսոփայող անհատ, որը խոսում է ժամանակի ու ճշմարտության անունից: «Ծաղրածուն պիտի ծիծաղեցնի, ծիծաղը պարտադիր է: Ծաղրածուն միշտ զվարճախոս է եղել, բայց հանդուգն զվարճախոս՝ բոլոր ժամանակների ու բոլոր արքաների մոտ: Նա միշտ միակն է եղել, որ ճշմարտությունն ասել է արքաների երեսին», - մի առիթով ասել է Լ. Ենգիբարյանը:

Մեծանուն արտիստը տագնապելու, խորհելու ու կիսվելու շատ բան ուներ ժամանակի ու ժամանակակցի հետ, դրա համար ձգտում էր առանձնացման: Պատահական չէ, որ ինքն էր գրում իր սցենարները, ինքն էլ բեմադրում և կատարում էր: Արվեստի դարոցը, որին դավանում էր նա, կյանքն էր: «Առանց որևէ իզմի, թեքման կամ տատանման... Կկանգնես ձեռքերիդ վրա, հաց կուտես», - գրել է նա «Ստեղծագործելու ընդունակություն» մանրաքանդակում: Լ. Ենգիբարյանը հաղորդակցվում էր մարդկանց հետ խելամիտ ու ընդգրկուն, որի համար նրա մասին չէին նշանավոր արտիստ Միրոսլավ Գորնիչեկն ասել է. «Հազարավորներ գալիս, շարունակ խոսում և ոչինչ չեն ասում: Նա եկավ, լռեց և ամեն ինչ ասաց»: Գրեթե նույնը, ինչ անգուգական Գասպար Դեբյուրոյի տապանագիրն է. «Աստ հանգչի նա, ով ասաց ամեն բան՝ չարտասանելով ոչ մի բառ»: Հայաստանում մնջախաղը դարերի պատմություն ունի, որի մասին հիշատակում է նաև քերթողահայր Մ. Խորենացին. «Նազենիկ ձեռամբ երգեր» (պալատական



խնջույթի ժամանակ Նազենիկ անունով մնջախաղաց վարձկանը իր խաղով գերել էր բոլորին): Հայ մնջախաղի գոյությունը հաստատեց հանճարեղ դերասան Լ. Ենգիբարյանը մի նոր աստիճանի բարձրացնելով արվեստի այս ինքնատիպ տեսակը:

Ենգիբարյան-արվեստագետը գտնում էր, որ ծաղրածու-մնջախաղացը դառնալու է մի երևույթ, որը թատերարվեստում առավել դժվարին ու ինքնատիպ խոսք է ասելու. չարի ու բարու, լուսի ու ստվերի, ժամանակի ու խղճի մասին՝ նոր ձևով, նոր լեզվով:

Հանրաճանաչ գեղագետը լի էր ասելիքով ոչ միայն կրկեսաբեմում. նա ազատ ժամերին իր մտքերը, քնարական ու նրբագեղ արձակով, կիսում էր ընթերցողների հետ: 1971-ին Լ. Ենգիբարյանը ստեղծեց մնջախաղի էստրադային բատրոն, որտեղ խաղացել է իր հեղինակած «Աստղային անձրև» և «Ծաղրածուի տարօրինակությունները» ներկայացումները: Բազմաշերտ հանդիսատեսին հոգեհարազատ էր Լ. Ենգիբարյանի «Փողոցային ակրոբատ», «Մարդ, որի հետ պատերազմել են», «Տոսալ գորահավաք», «Քայլեր», «Մանկական կյանքը», «Հովանոց», «Ողջն ու մեռածը», «Բուցքամարտ», «Սիրտը ափի մեջ», «Զուբակ», «Օլիմպիական մեդալներ» և այլ մտահղացումներ և ինքնուրույն բեմադրությամբ մանրպատասխաններ:

Երեք քաղաք կար, ուր Լ. Ենգիբարյանին առավել սիրում էին. Երևան, Մոսկվա և Պրահա: Այս երախտապարտ քաղաքներն էլ նրա մասին ֆիլմեր նկարահանեցին՝ «Ծաղրածուն հրաժեշտ է տալիս Պրահային», «Ճանապարհի դեպի կրկես», «Մուռացված նախնիների ստվերները», «2-Լեոնիդ-2», «Մանեժում պատանեկու-

թյունն է», «Ծանոթացեք, Լեոնիդ Ենգիբարյանն է» և այսօր էլ իրենց թարմությունը չկորցրած այլ կինոժապավեններ:

Լ. Ենգիբարյանի համար կրկեսը հարազատ հարկ էր, արտիստները՝ տան անդամներ: Նրա կյանքը մշտապես ծուլված էր այս հավերժ նոր ու հավերժ երիտասարդ արվեստին:

«Սովորաբար կրկեսում ծաղրածուները լրացնում են ընդմիջումները՝ արտիստների ելույթների միջև: Ենգիբարյանի դեպքում ընդհակառակն էր. մենք՝ արտիստներս, լրացնում էինք նրա ելույթների ընդմիջումները», մի առիթով ասաց Հայաստանի կրկեսի գեղարվեստական ղեկավար, Ենգիբարյանի սան Սոս Պետրոսյանը:

Աշխարհի շատ բեմեր նվաճած արտիստի ելույթներին արվեստասերները միշտ էլ անհամբերությամբ էին սպասում և լարված հետևում էին նրա «խաղին», գիտեին, որ հաղորդակցվելու են Ենգիբարյանի բարձր արվեստին, գիտեին, որ նրա յուրաքանչյուր կատարում ուներ ասելիք, մտքի թռիչք, մտորելու և խորհելու առիթ, ինքնատիպ ու դժվարին կատարում, որ միայն իրենն էր՝ հագեցած ենգիբարյանական ճշմարիտ ու հավաստի արվեստով: Մտահղացումներով լի, հետաքրքրական ու դժվարին շատ կատարումներ, մինչև օրս մնացին չգերազանցված, մնացին՝ ենգիբարյանական: Պատահական չէ, որ հանճարեղ Լեոնիդ Ենգիբարյանին աշխարհը կոչեց «Բոլոր ժամանակների ծաղրածուն»:

Մեծ դերասանի մահը շատերի համար մնաց առեղծված: Իր խաղընկեր Ալբերտ Մինասյանը հիշում է Լ. Ենգիբարյանի մոր պատմածից. առավոտյան մայրը մտնում է որդու սենյակը՝ արթնացնելու... Իր արվեստի մեծան լուռ, առանց որևէ մեկին անհանգստացնելու, կյանքից հեռացավ լռության հանճարեղ արտիստը: Ցավոք, Լ. Ենգիբարյանն ավելի շատ մտահղացումներ տարավ իր հետ, քան արեց կենդանության ժամանակ: Կյանքից հեռացավ, երբ ապրում էր ստեղծագործական բուռն զարգացման ու վերելքի շրջանը: Ափսոս, նրա «ջութակը» վաղաժամ կտորվեց, բայց ամոքվեց նրանով, որ մեծ հայտնի ջութակի ձայնը դեռ լսվում է:

Ասում են վարպետը նա է, ով աշակերտներ ունի: Լ. Ենգիբարյանը ունեցավ բազմաթիվ շնորհալի հետնորդներ, որոնք մինչև այսօր էլ շարունակում են մեծ արտիստի հավերժ կենդանի արվեստը: Վաղամեռիկ արտիստի ընդհատված դասերը, որ իրոք դասական է՝ շարունակվում են ու դեռ դարեր կշարունակվեն... Լեոնիդ Ենգիբարյան՝ արվեստագետ անհատը հավելեց մեր թատերական արվեստի մեծանուն դերասանների շարքը՝ դառնալով հավերժի ճամփորդ:

Մարտի 15-ին լրացավ սիրված արտիստի ծննդյան 70 տարին:

Հակոբ ՉԱՆՈՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՊՏԱԴԵՄ ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ



Լուսինե Թովմասյանի հմայքը գերեց Եվրոպան

Հայաստանում հազարավոր մարդիկ շաբաթ ուշ երեկոյան հեռուստատեսության հաշվառման լարված հետևում էին Փարիզի սպորտի պալատում ընթացող «Միսս Եվրոպա-2005» գեղեցկության մրցույթի ուղիղ հեռարձակմանը: Իսկ լարվածության պատճառ առավել բան կար, բանգի այդ յուրօրինակ մրցույթին մասնակցում էր «Միսս Հայաստան-2003»-ի թագակիր, երևանցի 18-ամյա Լուսինե Թովմասյանը: Նշենք, որ ժյուրիի կազմում էր աշխարհահռչակ Շառլ Ազնավուրը: Հատկանշական էր նրա պատասխանը, երբ վերջին փուլից առաջ հաղորդավարը դիմելով նրան, նկատեց, թե հայտնի շանսոնյեն հիմա կամ մեծ հիասթափություն կապրի, կամ մեծ ուրախություն: Ազնավուրը պատասխանեց. «Հայերն արդեն հաղթել են...»: Արդեն հայտնի է, որ եզրափակչում ժյուրին հաղթող ճանաչեց Գերմանիան ներկայացնող պարսկուհի Շերմին Շահրիբարին, իսկ Լուսինե Թովմասյանը ճանաչվեց վիցե-միսս Եվրոպա: Գուցե այս պարագայում օբյեկտիվ չենք, բայց, թերևս շատերի կարծիքն արտահայտած կլինենք, նկատելով, որ բյուրեղապակե թագը պիտի մեր հայրենակցուհուն գարդարեր: Թղթակցի հետ կարճատև հեռախոսագրույցի ժամանակ Հանրային հեռուստառադիոընկերության խորհրդի նախագահ Ալեքսան Հարությունյանն էլ զրեթե նույնն ասաց. «Մենք այստեղ, Փարիզում մինչև վերջին պահը հույս ունեինք, որ Լուսինեն ավելի բարձր, այսինքն՝ ամենաբարձր տեղը կգրավի, որովհետև նա իրոք արժանի է դրան: Բայց սա էլ մեծ ձեռքբերում է, մասնավորապես հաշվի առնելով, որ նման ներկայացուցչական մրցույթում Հայաստանն առաջին անգամ է այսպիսի հաջողության հասնում»: Ի դեպ նշենք, Հանրային հեռուստառնկերությունը տեղեկատվական աջակցություն է ցուցաբերել «Միսս Եվրոպա» մրցույթին Լուսինե Թովմասյանի մասնակցությանը: Եվ առաջին անգամ էր, որ ՀՀ-ը ուղիղ եթերում վերահեռարձակում էր այդ ուշագրավ իրադարձության ռեպորտաժ: Տեղեկացանք, որ երեկ Լուսինե Թովմասյանն արդեն վերադարձել է հայրենիք: Սակայն Հայաստանի ժպտադեմ գեղեցկուհին դեռ չէր թոթափել տևական թռիչքի հոգնությունը, ուստի հնարավոր չեղավ նրան հանդիպել: Փո-

խարենը զրուցեցինք «Միսս Հայաստան» ազգային գործակալության նախագահ Կարեն Արիստակեսյանի հետ, խնդրելով պատմել թե՛ Լուսինեի և թե՛ այսօրինակ մրցույթներում մեր երկրի ներկայացուցիչների նախորդ մասնակցության մասին: Նկատենք, որ Հայաստանում գեղեցկության մրցույթներ անցկացվում են 1996 թվականից: Իսկ «Միսս Եվրոպա»-ին մինչ այժմ հայուհիների ամենաբարձր ձեռքբերում եղել էր 15 գեղեցկուհիների կազմում ընդգրկվելը: Այսպես՝ 1998-ին Գոհար Հարությունյանն էր ընդգրկվել «Միսս Եվրոպա»-ի լավագույն 15-յակի մեջ, իսկ 2001-ին՝ Իրինա Թովմասյանը: Նշենք, որ Իրինան Լուսինեի հարազատ քույրն է: Երկու քույրերն էլ սովորում են նույն բուհում՝ «Ինտեր լինգվա» լեզվաբանական համալսարանում: Ավելի ճիշտ՝ Իրինա Թովմասյանը ավարտել է բուհը. այժմ մենեջեր է աշխատում: Իսկ Լուսինե Թովմասյանը, ինչպես տեղեկացանք Կ. Արիստակեսյանից, սովորելուն զուգահեռ Փարիզում և ճապոնիայում նախապես ուժերը փորձել է որպես մանկեկուհի: Եվ մեր զրուցակցի խոսքերով, այս ոլորտում նրան մեծ ապագա է սպասվում: Իսկ գեղեցկության մրցույթում արձանագրած ձեռքբերումը, Կարեն Արիստակեսյանի համոզմամբ, Լուսինեի առաջին, բայց վերջին հաջողությունն էր չի լինի: Հնարավոր է, որ հետագայում Լուսինեն մասնակցի ինչպես մանկեկուհիների, այնպես էլ գեղեցկության այլ մրցույթների («Միսս տիեզերք», «Միսս ինտերկոնտինենտալ», «Միսս աշխարհամանկեկուհի»): «Հայաստանում վերջին տարիներին գեղեցկության մրցույթները անցկացվել են միջազգային չափանիշներին համապատասխան: Եվ վստահ էինք, որ այդ չափանիշները պահպանելով, բնականաբար մի օր պետք է հաջողության հասնենք: Կոնկրետ այս մրցույթին մասնակցելու առումով նախապես էլ ցանկություն կար լավագույն հնգյակում լինելու, և մեր այդ ակնկալիքներն արդարացան ու, ինչպես տեսաք, դեռ մի բան էլ ավելին», - նշեց Կ. Արիստակեսյանը: Նրա կարծիքով, Լուսինե Թովմասյանի հաջողությունից հետո «Միսս Հայաստան» մրցույթներին ավելի շատ հայուհիներ կձգտեն մասնակցել:

Արմեն ՀԱՎՈՐՅԱՆ

## «Горцарар»

Издаётся с июля 1999г.

**АВТОР ПРОЕКТА-ВАГРАМ БЕКЧЯН**

Зам. гл. редактора - **Роза ГУЛЯН**  
Գլխ. խմբագրի տեղակալ՝ **Ռոզա ՂՈՒԼՅԱՆ**

**ИЗДАТЕЛЬ**

Издательский Дом

**«ШАГАНЭ»**

Лицензия серия ИД № 02313

Журнал зарегистрирован в Министерстве Российской Федерации по делам печати, телерадиовещания и средств массовых коммуникаций  
**Регистрационный номер ПИ № 77-5015**

Авторские материалы не рецензируются и не возвращаются. Переписку с читателями редакция не ведет. Мнение авторов может не совпадать с мнением редакции.

Материалы со знаком **♀** публикуются на правах рекламы.

Редакция не несет ответственности за содержание рекламных объявлений.

**ПЕРИОДИЧНОСТЬ ВЫХОДА -**

Отпечатано

ОАО «Калужская типография стандартов»  
Формат А3, объём 4,5 п.л.  
тираж 1500 экз. Зак. № 626

Территория распространения: Российская Федерация, страны СНГ, зарубежные страны.

В номере использованы материалы

«АЗГ», «АРАВОТ», «ГА», «ЕТЕР», «ԿԱԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ», «ԻՐԱՎԱՆԿ», «ՉԻ», «НОВОЕ ВРЕМЯ», «ВОЗНИ».

**Цена свободная.**

248001, г. Калуга,  
ул. Суворова, 160.  
тел.: (0842)-56-59-29,

E-Mail: [gortsarar@kaluga.ru](mailto:gortsarar@kaluga.ru)  
факс: (0842) 565-929,

[www.gortsarar.ru](http://www.gortsarar.ru)



E-Mail: [bshahanev@kaluga.ru](mailto:bshahanev@kaluga.ru)